ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

40 ՓԱՐԱ — ԼԱՆԴԷՍ ԱԶԳԱՅՔՆ — ՓԱՐԱ 40

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ լուրաքանչիւր շրջանը 52 օրինակ է։ Շրջանին գինն է Պոլսոյ համար 40 գահեկան, կանխիկ։ Կիսաշրջանը՝ 26 թերթ 20 գահեկան։ Հատը 30 փարայ։ Գաւառաց համար շրջանին գինն է թղթատարի ծախքով 50, կիսաշրջանը 26 գահեկան։

Ծանուցման տողը 2 գահեկան։ Անվճար նամակ չ'ընդունիր։ Չի հրատարակուած գրութիւնք եւ չեն տրուիր։ Նամակ եւ գրութիւնք ուղղել՝
առ. Տիրան Գ. Փափազեան
Պոլսոյ Ա'ի ճատտէսի Գիւմուշանէյին մուտքի թիւ 62

ԹՎԻ 15 Գ. ՏԱՐԻ — 1888 — ՊԱՐԱՍԿԵՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՆՈՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրական տոպարէզի վրայ իւր բաղմաթիւ հրատարակութիւններուն բաղմաձանօթ Յակոբ Էֆ. Հաճեան, այս անգամ Սուրհանդակի խմբագրութիւնը ստանձնած է.

Այս կարգադրութեամբ, Սուրհանդակի պարբերականութիւնը յայտնի է թէ աւելի ճոխ պիտի ըլլայ; ակէ զատ Հաճեան էֆէնտիի հրահանգիչ եւ զուարճալի յօդուածներուն ընթերցասէր ժողովրդեան մէջ գտած ընդունելութիւնն անշուշտ մեզ քաջալերը պիտի ըլլայ յառաջիկային թերթերնուս դիրքը մեծցնելու. բայց առ այժմ նախկին դիրքովը պիտի հրատարակուի մի անգամ շաբաթ օրերն։

Հաճեան էֆ. իւր մի քանի անձնական գործոց պատճառաւ յաջորդ թուով պիտի սկսի թերթիս խմբագրութեան. այս առթիւ, կը ծանուցանենք Մեծարոյ ընթերցողաց որ իւր հեղինակած և մաս առ մաս Ծաղկի մէջ հրատարակուած ԿԵՆԱՑ ԽԱՂԵՐ անուն վիպասանութեան երկրորդ հատորը՝ գարձեալ մաս առ մաս Սուրհանդակի մէջ պիտի շարունակուի։

Արդ Սուրհանդակի տարեկան բաժանորդագրութեան գինը անփոփոխ մնալով, ձեռքէ ծախուածներն այս թիւէն սկսեալ հատը 40 բարայի պիտի վաճառուի. յուսալով որ Մեծարոյ Ընթերցողք իւրեանց քաջալերութիւնը չպիտի զլանան մեզ, պիտի ջանանք ի մօտոյ թերթիս ծաւալը մեծցնելու։

——

Մեր ԶԱՆԹԱ անուն՝ Թրքատառ և շաբաթական զուարճախրթին առաջին թիւը հինգշաբթի օրն հրատարակեցաւ, որուն խմբագրութիւնը նոյնպէս Յակոբ Էֆէնտի Հաճեան ստանձնած է, եւ որոյ հեղինակած ԲԵՐԱՅԻ ԳԻՇԵՐՆԵՐ անուն վիպասանութեան տաճկերէն թարգմանութիւնը մաս առ մաս Զանթայի մէջ երկրորդ թիւէն սկսեալ հրատարակուիլ պիտի սկսի։

ԱԶԳԱՅՔՆ

ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Հինգշաբթի օրուան գումարուած Երեսփոխանական ժողովոյ մէջ, քուէից բացարձակ առաւելութեամբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք ընտրուեցաւ Արմաշու Վանահայր Ամենապատիւ Տ. Տ. Խորէն Եպիսկոպոս Աշքեան։

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ.

——

Երեքշաբթի օրն ըստրութեամբ տեսանք՝ երկու շաբաթուան համար դադարեալ Մանդումէի Էֆէնտիի լրագրոյն վերսին հրատարակութիւնը։

Յաջողութիւն մաղթելով մեր յարգոյ պաշտօնակցին իւր յարատեւել սկսելուն համար ի սրտէ խնդակցութիւնս կը յայտնենք։

ՊԱՏՄԱՌԹԻՒՆ
ԶՄԻՒՐՆԻՈՅ

ՎԵՐՋԻՆ ԱՆՑԻՑ

(Շար. տես թիւ 13)

Վերջապէս Մամուրեան էֆէնտի անուրիրոյ էր քաջալերեցաւ թէ՝ ինք և Մելքիսեդէկ սրբազան՝ որ կողմ ալ դառնային, ի՛նչ կերպով ալ շարժէին, անհնար պիտի ըլլար իրենց ազատ մնալ բամբասուելէ. սակայն դէմ Ս. Առաջնորդն իր պատճառաւ կրած և կրելիք ընդդիմութիւններէն միանգամ ընդ միշտ ազատելու համար, հաւատակ Զմիւռնի ազգամիտ հայոց բիւրաւոր թախանձանաց, խնդրանքներուն կը համարի հրաժարիլ զպրոցական տեսչութենէն, և արժանաւորին՝ այն է (հանգուցեալ) Իփէքճեան էֆ.ի թողուլ զայն, որ նոյն միջոցին իւր խնդրանքաւ Կրթական խորհրդոյ կողմանէ Իզմիր կանչուած էր։ Սակայն կը ցաւինք ըսել թէ, Իփէքճեան էֆէնտի ալ հոգիս կը կարդանայ առ առաւելն 16 ամիսներ վարել այդ տաղտկալի պաշտօն, ի պատճառս Կրթական խորհրդոյ անհամաձայն ընթացքին և երկուստեք յարուցուած նորանոր հակառակորդներու, և հրաժարելով կը փութայ քիչ օրէ վերադառնալ ի Պոլիս. հետևաբար այդ պաշտօն առ ի չգոյէ ուրիշ արժանաւորագոյնի մը, վերտին կու գայ կը ծանրանայ Մամուրեան էֆ.ի վրայ, զոր յոյժ դժուարաւ կը համակերպի ընդունիլ այս անգամ և այն ալ առ ժամայ կերպով։

Ահա այս պատճառաւ հինգերորդ կուսակցութիւն մ'ալ երևան կելնէ Իզմիրի մէջ ընդդէմ Մելքիսեդէկ Սրբազանի. այս կուսակցութեան գլխաւոր առարկութիւնն էր թէ ինչո՞ւ Գեր. Առաջնորդն չէր հաւանած գործադրութեան դնել Իփէքճեան էֆ.ի անիրանալի ծրագիրն, որ թէև յոյժ օգտաւէտ, սակայն մեծագումար դրամագլուխի մը կը կարօտէր որու չէր կարող գոհացում տալ երբէք Իզմիրի Ազգային արկղը և վարժարանաց համար սահմանեալ գումարը, թէև բաւական յաւելում մ'ալ եղած էր. այս առարկութեան հեղինակներն կը հաստատեն, այն ժամանակի Կրթական խորհրդոյ անդամք Գալուստ Կոստանդեան, Մ. Նուպարեան և Գրիգոր Մսերեան էֆէնտիք որք իրենց թշնամալից դիտողութիւններն պարզած էին «Գալրոցական Խնդիր» անուն տետրակի մը մէջ։

Զմռնանք ըսել սակայն թէ Գալուստ էֆ. Կոստանդեան և Գ. Մսերեան այլ անձնական պատճառներ ունէին հակառակելու Ս. Առաջնորդին դէմ. առաջինն՝ «Մէթոտի վրայ» անուն ազգավնաս գրքի մը երկրորդ հատորի հրատարակութիւնն և առաջնոյն տարածումը արգիլելուն, իսկ երկրորդ Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ օրինաց հակառակ՝ ամուսնական ծանր ամբարշտութիւն մը գործած պահուն եկեղեցական օրինաց խստութիւնն անաչառաբար ի գործ դնելուն համար։ Երկու պատճառներ որք միւսներու նման, չէին կրնար արտա մը բերել Գեր. Մելքիսեդեկ սրբազանի իրական հարաւոյն։

Մեր մինչև ցարդ գրածներով կը յուսամ թէ յաջողեցանք՝ նիւթին ընդարձակութեան հակառակ, համառօտակի ամփոփել հոս 5–6 քինախնդիր կուսակցութեանց յարուցած անոսի պատճառանքներն. պատճառանքներ՝ որք սակայն քաջքշուելով կրնային օր մը դժնդակ երկպառակութեան մանել զաւառը և վարձեալ խռովարարներու ու չարախօսներու ձեռամբ 10 տարուան մէջ, ուրիշ շատ խաւերու մէջ ալ տարածուիլ, ինչպէս որ պատահեր է ի վերջէ. վասն զի այդ անհաչտելի հակառակորդք գոգցես երդուած էին յաւիտենապէս ոխակալ ըլլալ այն անձին դէմ որ իւր բոլոր առաջնորդութեան օրերն իւր պարտաւորութիւնը ճանչնալէ զատ յանցանք մը չէ գործած զաւառին մէջ։

Նոյն միջոցին Ար. արլյս Արարատեան լրագիրն որ դադրած է եղեր բարեյիշ. տակ խմբագրին մահուամբ. վերտին կ'սկսի հրատարակուիլ, խնամակալութեամբ Յովհաննէս Բիլիճեանի և խմբագրութեամբ պատուելի Տ. Հայրապետ Թ. Սաւալանեանի։

Այս վերջինն որ խմբագրութեան ձեռնարկէ մեկ երկու տարի առաջ վերադարձեր էր Երուսաղէմէն և Մելքիսեդէկ սրբազանի ամենէ մօտաւոր բարեկամն էր, իր Իզմիր հաստատուելէն հաք ջանքեր ըրած է Մեսրոպեան Վարժարանի հոյակապանութեան բաղմամեայ և արդիւնաւոր ուսուցիչ Սարգիս էֆ. Պալապանեանի տեղ անցնիլ, սակայն Մամուրեան էֆ. իբրև Տեսուչ՝ կընդդիմանայ այդ փոփոխութեան տեղի ունենալուն. Սաւալանեան էֆ. յուսաբեկ՝ երբ խմբագրութեան կը ձեռնարկէ՝ առանց աջ և ձախ նայելու իւր բոլոր ճիգը կը թափէ՝ իւր քընադատական յախտուն յօդուածներով հրաւիրել բոլոր հակամամուրեանները զալ ու միսնալ իւր դրօշին տակ, անանկ որ քիչ ատենի մէջ այդ յարդանաց արժանի թերթը կապիտալին կամ Արշակաւան մը կը դառնայ դաս մը Զմիւռնական գրչակներու համար որք ուրիշ թերթերէ մերժուած էին ալ դէն։

Առ այս տիկին Թագուհի Պալդազարեան, տեսնելով որ իւր բարեյիշատակ ամուսնոյն վերջին կամաց հակառակ՝ թերթը այլ և այլ կուսակցութեանց գործի կը դառնայ և պատուաւոր բարեկամաց դժգոհութեան տեղի կուտայ, արդարութեան պարտ մը կատարելով անմիջապէս ձեռքէն կառնու թերթն և քանի մը չարաթներ Նշան էֆ. Միրզայեանի խմբագրութեան յանձնելէ հաք հուսկ կը պարտաւորի հանդուցեալ Սվաճեան Յարութիւն էֆ.ի վաճառել թերթին խմբագրութիւնն, որ նոյն միջոցին հետամուտ եղած էր, թելադրուելով մի քանի բարեկամներէ, կամ լաւ եւս ըսեմ Մելքիսեդեկ Սրբազանի անհաչտ թշնամիներէ։

Սվաճեան Յարութիւն էֆ. բարեհամբոյր և ազնիւ երիտասարդ մ'էր. Յարիգէ՝ կը ճանչեմ զինք ուր եկած էր իրաւագիտական ուսումն աշխատելու. մտացի ու կարող լեզուագէտ, և բնաձիր տաղանդ մ'ալ ունէր որ կըրնար զինքը ապագային գիտական մեծ մարդ մ'ընել. սակայն աւա՛ղ որ չէր յաջողած, թերեւս գաւառացի մ'ըլլալուն պատճառաւ, Զմիւռնի պատուաւոր դասուն մէջ մուտ գտնել, և մի քանի բարոյականի մարին կասկածելի անձանց ընկերակցութեամբ ոգելից ըմպելիաց գերին դառնալով քիչ ատենի մէջ կորուսեր էր իւր առողջութիւնն և իւր ծանրապէս հիւանդացած պահուն Կ. էֆ. Սաեփանեան կը ձեռնարկէ խմբագրութեան, որ նոյն միջոցին պատուաւոր ամուսնոյ մը կիներ առնանդելով հռչակեր է թէ դաղտնապէս ամուսնացեր է նորա հետ, հետևաբար հա-

կատակ կրօն. ժողովոյ կողմէ իրեն եղած ազդարարութեանց կը չարունակէ կենակցիլ այդ կնոջ հետ։ Բնական է թէ Ստեփանեան էֆ. որ նախապէս Ռոկանեանի և Եղեսեանի խնդրէն հակառակորդ մ՚էր Գեր. Առաջնորդին, այս վերջին ծանուցեալ խնդրով առաւել պիտի զայրանար և իւր կրից յագուրդ տալու համար Արշալոյսի խմբագրին հրամանդութեամբ ներկայած առիթէն հազիւ պիտի կարենար օգտուիլ, ինչպէս որ պատահեր էր ալ։

Ահա այդ միջոցին է եղեր՝ որ Եղեսեան խնդիրէն ետք՝ առաջին անգամ ըլլալով Զմիւռնին վերստին խռովութեան և երկպառակութեան կը մատնուի, զի Ստեփանեան էֆէնտի մի այլ քանիներու ընկերակցութեամբ այնքան ծանր ու յարձակողական յօդուածներ կը հրատարակէ Գեր. Առաջնորդին և Մամուրեանի դէմ, որու չհանդուրժելով Քաղաքական ժողովն, կը պատուիրէ Թաղրիր մը գրելով Վալիին խնդրել որ հարկ եղածն ի գործ դրուի Արշալոյսի ամլուր և անիրաւ յարձակումներն լռեցնելու համար։ Այս Թաղրիրին վրայ՝ Սվաճեան էֆ. թէև հիւանդ, 24 ժամ բանտարկութեան կը դատապարտուի և թերթը կը խափանուի։

Սոյն պատժոյ գործադրութիւնն անմիջապէս ոտք կը հանէ բոլոր հակառակորդներն, ամբաստանութիւններ և փողոցի կռիւներ ամեն կողմ երևան կելնեն, հակառակորդներու կողմէ ամբաստանեալ՝ մեր բարեծագիկ Արմէնը ձերբակալելու համար ոստիկանութիւնն քանի մը պատուաւոր տուներու մէջ խուզարկութիւններ կը կատարէ ի զուր, վասն զի Արմէն նոյն պահուն անտեղեակ պատահած խրախճանութեան մէջ՝ գիւղը կը գտնուէր. չմոռնանք ըսել թէ այս հակառակորդ խումբերուն միացած էր նաև դըպրոցականներու խումբ մ՚ալ, որոց պարագլուխ կը հանդիսանար Խ. Գիրձակեան անուն ինքնակոչ Բօղէօսէէրն, որ նոյն ժամանակ Արշալոյսի անօրէն գործակատարն է եղեր։

Արշալոյսի վերաբացուելով և Սվաճեան էֆ.ի մահուամբ կիրքերն թէև կը հանդարտին պահ մը, սակայն հակառակորդք անընդհատ առիթներ կորոնեն նորանոր խնդիրներ յարուցանելու. այդ խնդիրներն էին Կաթողիկոսի յիշատակութեան խնդիր, Շահպազեանի խնդիր, որք բնաւ վերաբերութիւն չունէին Զմիւռնիական խնդիրներուն հետ, և ի վերջ բանիս կու գայ կը հասնի Զմիւռնիոյ դերեզմանատան խնդրին, որ վերջին խնդիրն պէտք է նկատուի Զմիւռնիոյ անցից։

Գրեթէ հարիւր տարիներէ ի վեր անգործածելի մնացած և մեռել մ՚իսկ չթաղուած չոր ու անբերրի հողի մը վրայ կրպակներ կառուցանելու ազգային խորհուրդը՝ կրօնային ջերմ նախանձայուզութեամբ կը վառէ այն Իզմիրցի հակառակորդներն որոնք մին «Պատասխան մը» անուամբ տետրակով՝ եկեղեցիները ծախել և անոնց տեղ զպրոցներ կառուցանել կը յորդորէր, ուրիշ մը Մէթոսի վրայ անուն գրքին տպագրութեանը օգնական կը հաշակէր, և ուրիշ մ՚ալ սուրբերն ու եկեղեցին կը ծաղրէր բարձրաղոչ, որոց հըրատարակութիւններն անհերքելի վկաներ են սոյն մեր ըսածներուն. այնպէս որ ոսկերատեղ փոխադրութեան խնդիրն ոտք կը հանէ մինչև իսկ տան աղջիկները կըծկըտող հոտի պառաւ խոժոռոններն, որք կը գրգռեն իրենց Թաղերը ընդդիմանալ այդ փոխադրութեան կարի անօրէն միջոցներով, և որոց անխորհուրդ շարժմանց զոհ կերթայ յանմեղն Գեր. Մելքիսեդեկ Սրբազան։

Ահա այս է Գեր. Առաջնորդին Իզմիրէ հրաժարելուն վերջին պարագան որ աւելի անպատուաբեր եղած էր նոյն գաւառի հայ ժողովրդեան, քան Սրբազան Առաջնորդին, որ իւր անզննահասելի արժանեօք միշտ առաջնական տեղ մը կը գրաւէ հայ կղերին մէջ։

Ահա այսքան տեղեկութիւն միայն կարողացայ քաղել ուղեւորութեանս կարճ ժամանակին մէջ Իզմիրի անցից նկատմամբ, զորս չեմ կարծեր թէ Իզմիրցի մ՚իսկ համարձակի հերքել։

Մատուցածներուն համար կանխաւ ներողութիւն խընդրելով՝ կը մնամ միշտ բարեհամբ,

ՈՒՂԵՒՈՐ

ՆՈՐԱՎԷՊ

ԲԺՇԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՄԸ

(Գօնսիւլթասիօն)

(Շար. և վերջ Տես թիւ 14)

Մինչև այն ատեն ունկնդիրք առանց ընդմիջելու մտիկ ըրին տօքթէօր Միւլլէրի պատմութիւնը։

Երբ պատմութեան այս կէտն ըսաւ, բոլոր թեկնածուներն ծերունի պատմիչին շուրջը միահաղոյն մերձենալու համար ճանչցին։

«Տօքթէօր, գոչեց մարգիզուհին անհամբեր, շուտով իսկ ըսէք մեզ, ո՞ւր կուզէիք տանիլ ամեն առաւօտ զօրիօրդ Վան—Օվէն։

—Եւ ո՞ւր պիտի տանէի, Պատասխանեց ծանրութեամբ, ուղղակի աղքատաց տունը, իմ սովորական այցելութեանցս. Կերդնում ձեզ որ անդ կը գտնուէր Էտիթի համար համակրուելու, յուզուելու, արտասուելու, գործելու և ապրելու շատ բաներ։ Ամենեւին չխնայեցի իրմէ ոչ մի թշուառութիւն, ոչ մի վէրք, և ոչ մի իրական տրտում, ամենն ալ ցոյց տուի։

«Ազնիւ և առատաձեռն աղջիկ... Ահ, լաւ գուշակեր էի նորա սիրտն։

Առաջին տան մէջ, ուր կայ աւինք, պարտաւորեցայ զինքը գրեթէ գիրկս առնելով մինչև հինգերորդ դստիկոնը հանել։ Երկրորդ ցեղնամէջը մինակուկ ելաւ։ Երրորդին, ինձմէ շատ առաջ հասած էր։ Սակայն մատաղ աղջկան փոքրիկ քսակին մէջ ալ ստակ չմնաց։

Ձեզ փոխ կու տամ, ըսի նմա, մի՛ երկնչիք

Վան—Օվէնը չէ՛նք կործաներ, մխիթարելու եւ նպաստելու համար ուրիշ միջոց մալ կայ։

—Ո՞րն է։

—Ոն յառաջ երթանք... պիտի տեսնէ՛ք։

Խեղճ եօթանասնամեայ մը որ անկելանոց դըր-ուիլ կը խնդրէր չէր յաջողած, ուստի յուսահատ իր մահուանը կսպասէր։

Դեռ երէկ, կըսէր մեզ, ներքին գործոց պաշտօնէին քանիերորդ անգամն ըլլալով գրեցի։

—Նախարարը մեր ազգականներէն է, մինչեւ ծայրահեղ ընկերուհիս։

Դարձեալ քիչ մը հեռուն, աղքատ աղջիկունք, որոնց լուսագոյն ինչքն էր միայն համեստ ու պար-կեշտ, և այդ արժանապէս վճարուած գործ պէտք էր։

Դժբաղդաբար Էտիթ իր կար կարողը, հան-դերձապահը, դերձակ նորաձեւուհին են. ունէր։

Սակայն աւելի անդին, գէմերնիս ելան գըռ-թէ մերկ ու աղքատ մանկիկներ..., ուրիշներ ալ պիտի հանդիպէին, կատարեալ դըկում մը... խանձարրազո՞րկ,

Գործը գտնուեցաւ, նոյնպէս ալ կնքամայրն։

Ապա իջանք իմ արուեստատուհեացս մօտն.

Քանի մը քնքոյշ քաջալերութիւն կըրնան ըս-տեղծել մե՛ծ մարդեր։

Վերջապէս մեր այցելութիւնքը վերջացան ամբողջ ընտանիքի մը, որք հիւանդութեան, աղ-քատութեան մատնուած էին, զի անդրանիկնին իրենց միակ ապաւէնը, զինուոր էր հինգ տարիէ հետէ, և յօ-սահատեր էր արձակուրդ մը ստա-նալէ զոր իր վաշտին գնդապետը կը մերժէր, այդ վաշտը յայնժամ 'ի Կրընօպլ պահակագունդ էր։

«'Ի Կրընօ՛պլ, պոռաց Էտիթ ցնծագին, գնդա-պետն հօրս մտերմագոյն բարեկամներէ մէկն է ի՛նչ բարեբաղդութիւն, ի՛նչ բարի պատեհ։

—Զաւա՛կս, պատասխանեցի ճակատն համ-բուրելով, ձեզի պէս հարստութիւն, բարձր դիրք, մատաղատի գեղեցկութիւն ունեցողները միշտ պատեհութիւն կունենան։

Վերջապէս երբ ապարանքը վերադարձանք, Էտիթ յուշատետրս առաւ ձեռքէս, և աչքիս ծայ-րովը, առաջին երեսին վրայ կարող եղայ ըն-թեռնուլ։

1. Տուն վերադարձիս, խօսիլ հօրս։

2. Այս երեկոյ գրել 'ի Կրընօպլ։

3. Վաղիւ առաւօտուն. նախարար ազգականիս տունը։

4. Սանուցս համար ստացուածք.

5. Դարձեալ հօրս հետ «արուեստուհիներուս մօտն»ի համար են.

Էտիթ արդէն իսկ կը հասկընար թէ երբ տասն և վեց տարեկան հասակ մտնէր և բաւական ալ դրամ, իրաւունք չունէր դատարկասուն միալ. եւ մանաւանդ մնալու, ինքզինքն օգտակար ընել կ'ուզէր, այլ եւ կ'սկսէր սիրով բորբոքիլ բարւոյն համար, հետեւաբար ազատած, զուարթացած և կենդանի՛ էր։

Վաղայաջորդ օրն, հազիւ ժամադրավայրը հասայ, ուր 'ի վաղուց ինձ կսպասէր Էտիթ ան-համբեր. Տարթուան վերջը չի հասած ամենալաւ և ըստ պատշաճի զինուորագրուած էի սքանչելի վաշտի մը մէջ, որոյ անարժան զօրահաւաքն էի, և այդ գունդը, ամենեքին երբէք չե՛մ երկնչիր անուանել «Փարիզու հրեշտակներն»։

Մէկ ամիս ետքը, այնպէս լաւ ինքզինքին ե-կեր, այնպէս կատարեալ քաջառողջ, այնչափ զուարթամիտ կայտառ եղեր էր, որ Վան—Օվէն ուրախութենէ ինքնիրմէն ելած, կ'աղաղակէր.

«Ահաւասիկ Ֆրանքֆօրթ և Սթօրֆիուս և ընկ. ը բերել տալու ժամանակն եկաւ։

Արդէն իսկ Էտիթի գոյնը երեսէն լոյս տուեր էր։

«Զէ՛, պոռացի աշխուժիւ, թողունք Սթօրֆի-ուս և ընկերքը, թող Հռէնոսէ անդի՛ն միան տե-ղերնին։

—Ո՜ երկինք, տոքթէօ՛ր, պիտի արգիլէ՞ք աղ-ջկանս..

—Ամուսնանա՞լ, բնաւ երբէք, այլ ամուսինը. գէթ զայն.. Ատենէ մը ետքը, պիտի տեսնենք և այդ բանն ինձ կը պատկանի։

—Ինչ ըսիք, ձե՞զ։

—Միթէ Էտիթ քիչ մ'ալ իմ զաւակս չէ՞.

—Այո՛. այո՛։

Եւ քանի մը տարի ետքը, օր մը Վան—Օվէնի մօտը երթալով ըսի։

Էտիթնիս կարգելու՝ ատենն եկաւ։

—Պա՛հ, էյ ո՞րու հետ նայինք։

—Լուսիէն տը Գ...ի հետ։

—Ինչպէ՞ս, այն արուեստագէ՞տը որոյ առա-ջին պատկերը ինձ գրել տուաւ աղջիկը։

—Ըսէք ազնուականը, որ իր հօրը պարտքերը վճարելու համար կամովին աղքատանալէ զկնի, իր տաղանդով վերստին նոր հարստութեամբ մը վերականգնեցաւ։

—Արուեստագիտի հարստութի՛ւն մը.

—Որուն վրայ իմ կողմանէս միլիօն մը կը յա-ւելում։

—Միլիոն մը, էյ ուստիյ պիտի առնուի դայդ

—Ձեր արկղէն։

—Օ՛ն։

—Բժշկութեան այյագիններս պարտական չէ՞ք ինձ. Մէն մի մերժմանս առեն հարիւր անգամ չի կրկնեցի՞ք թէ -Էն շատ լաւ, ադդպէս բլայ, եռքը կը նայինք, Դուք որյուի ուղէք, դարձեալ աղջկանս փրկութեան գինը երբէք բաւական բարձը նշանակած չպիտի լինիք.

—Անտարակոյս, բայց...։

—Կը կարծէք թէ շատ քիչ եղած լինի մէկ միլիոնը, լաւ երկու ըսենք. Դարձեալ զայն Էտիթի ամուսնոյն կուտամ յօժիա։

Վան—Օվէն տակաւին կատարեալ այո՛ չէր ըսէր։

Բայց Էտիթ անշուշտ զմեզ մոռիկ կընէր, յանկարծ եկաւ հօրը դիրկը նետուեցաւ հայրը յոգթահարեալ էր։

Ապա... ապա ահա այսպէս հրաշիւք ինն վերաբարոյց ըրի ղՏիկին որ Դ... ահա այս կերպիւ կը մտածեմ թէ կընան բուժիլ Բարիզեան փափկամարմնութենէ բռնուած մեծափարթամ տիկնայք, աղջկունք և մանաւանդ այրիներն։

Զօր օրինակ,

Աշխատութեամբ, գթութեամբ և սիրո՛վ։

Այս էր ահա տոքթոր Միւլլէրի ամբողջ մոգական հմտաքը։

Կէս գիշեր կը զարնէր։

Ունկնդիրք ոտք ելան մեկնելու համար։

Այլ դահլիճէն դուրս տակաւին իրենցմէ մէկը չելած մարդիզուհին դիմեց դէպ ի ծերունի բժշկին, ինքնակամ նորա երկու երեսները համբուրեց և ամենուս ներկայութեանը գոչեց։

«Շնորհակալ եմ խորհրդակցութիւններնէդ, տոքթոր, վաղը առաւօտուն եկէք դիս առնուլ որպէս զի մեր խեղճերուն առաջին սովորական շըրջանիս ընե՛նք. երթանք։

Շարլ Ֆրէ՛ Թարգմ. Վ. Քիւրքճեանն

*
* *

Իւր հաւատարմութեամբ հանրածանօթ աշխատասէր երիտասարդ մը, կուզէ վաճառատան մը մէջ օգնական դրագրի և կամ ուրիշ յարմար պաշտօն մը վարել ուզողը պէտք է դիմէ Ղալաթիա Գոմէսիոն խան թիւ 69

ՄԻ ՄԵՆԱՔ ԵՐԲԷՔ

Առանց ժամացոյցի

քանի որ Բարիզեան լաւ բանող զրպանի ժամացոյցներ Մի-Միանգն 45 ղրուշի անհաւատալի գնոյ մը փոխարէն կ'վաճառի. Սկլաճեան էֆ. ի վաճառատան մէջ ի մանուտ փաչա թիւ 244 ար գիմաղներն պիտի գտանեն նաև տարօրինակ աժանութեամբ զանազան տեսակ ընտիր ժամացոյցներ. Ոսկեդրամագ յոյժ ճաշակաւոր չրթաներ եւ նորաձեւ ապարանջաններ։

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ

1889

Գին 40 փարա

Կը գտնուի Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան դրասենեակը, Կ. Պոլիս, Մեծ-Նոր խան միջնայարկ, թիւ 48 49 50, և բոլոր Հայ դրավաճառաց քով.

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքն չը կրող օրինակներն վաւերական չեն։

ՇԱՀԻՆՏ ԳՈՒՄԲԱՆԻԱՍԸ

ՍՐԿԱՐԱՆ ԳԵՆԱՊԷՏԸ ՏԷՊՊՕՍՈՒ

ԻՍԹԱՆՊՈԼ ԱԼԱՃԱ ՀԱՄԱՄ

Ապուտ էֆ. խսնր գուբպիտէ Ն° 42

Պալատէքի սերլէհվալը եէնի քիւշտա օլան Ցէբօզիթօտա՝ Էվրօբանըն վէ պախուսուս Ֆրանսանըն էն մէշհուր ֆապրիգալարընտան պէրինճի Նէվի սիկարա քեաղըտը թէտարիք իթտիրիլուպ, իմալ վէ ֆիրուխթ օլունմագտա տուր։ Մուհթերեմ էհալինին իսթիմալ իթտիկի տուխանըն նէվի հեր գանղիսի օլուր իսկ օլուն, ա՛լա խալիս բիրինճատէն մա՛մուլ օլան մէգքիւր քեաղըտըն էրլէկի անճագ աղրգա ֆէվքելատե լէզզէթ վէ թաթլըլըգ կէթիրմէքտէն իպարէթ տիր։ Կէրէք իսթամպոլ վէ կէրէք թաշրալար իչուն վուգուս պուլանճագ սրբարբշլար սուհուլէթլէ վէ աթիտե միլնտէրիճ շարթլար իւզրե իճրա օլունուր։

Պիրինճի.— Կէօսթէրիլէն նիւմունէլէր մուճիպինճէ կէրէք քեաղըտլարըն ճինսի վէ կէրէք ատէտլէրի տօղրու օլանճագ տուր։

Իքինճի.— Սրբարբշլարը կիւնինտե թէուլիմիտուպ էօյլէ "Պու կիւն օլմատը, եարըն օլանճագ,, կիպի սեզլէր իլէ միւշտերիլերի ալտանթմահանճագ տուր։

Իւչիւնճի.— Կէրէք քեաղըտլարըն արալարընտա վէ կէրէք բեսիմլերտե ա՛սլա թագլիտ պուլունմահանճագ։

Թէշրիճէ բաղվէթ պուլուրանճագ էֆէնտիլէր իշպու իւանբմշղտա միւնտէրիճ շարթլարը թէմամէն իճրա իթմէքտե օլտուղումուզու թաստիգ իտէճքլէր։

ՇԱՀԻՆՏ ԳՈՒՄԲ.

—Նէ օ Սամուէլ ազա , կէչմիշ օլա , նէ՞ օլ-տու քի պէօյլէ օմուզունը գօլունը պաղլամըշսըն ։

—Սօրմա պիրատէր կէչէն կուն Պէյօղլունտա իշիմ վարըտը , տօղրու եօլտան կէչէրքէն թրամ-վայ պէկլիրլինին պիրի հարըն ըմըշ , օմուզումը գարմա՞սըն մը

—Հաֆըզ Ալլահ նէ՞ պէօյլուք գազա ։

—Օնտան պէրի պէշ կիւնտիւր ճէրահ պագը-եօր . , տահա օ կիւնիւ 130 ղրուշա պիր գաթ եէնի գօսթիւմ ալմըշըտըմ՝ ճագէթին օմուզը բարչա բարչա օլտու ձնա եանարըմ ։

—Շիմտի աղնա՛տըմ . . ուճուզ գօսթիւմլէրին գուսուրը սաֆի օխտուր , հայվան օմուզունտան գաբմըշ իսէ հարընլըղընտան աէկիլ աճընտան գաբ-մըշ ։

—Էօյլէ իսէ գուլաղըմա գիւբէ օլսուն տա , պիր տահա եէնի րուպա կիյինիրսէմ թրամվայ պէկլիրի եանընտան կէչմէյիմ ։

* *
*

Պու սապահ վէքիլհարճըն պիրի Պաղչէ գաբը-ընտա տուրմուշ պիր արապաճըիլէ նէվ թարզ պիր բազարլըք էթմէքտէ իտի ։

—Պօգսանի արապաճը՛, եարըն քի բազար կիւ-նիւ տիւյիւնիւմիւզ վար դըզ ալմաղա կիտիյէճէք , բազարլըղըմըզ ուեարսա էվի թարիֆ իտէյիմ եա-րըն սաաթ ալթըտա կէլիրսին .

—Պաշ իւսթիւնէ ։

—Սահաթ եէտիտէ կէլին ալմաղա կիտիյէճէք ձնտա կէրի աէձնիւլէճէք , նէ՞ վէրէճէկիզ ։

—Սիզ պիլիրսինիզ . . աէօրթ մէճիտիյէ վէրին։

—Տէօրթ մէճիտիյէ չօք աէկի՞լ մի ։

—Էֆէնտիմ պու տիւկիւնտիւր պաշկա չէյէ պէն-զէմէզ , պիզտէ պէօյլէ կիւնլէրէ պէքլէրիզ .

—Բէք էյի վէրէյիմ, ամա պաք սանա սէօյլէ-եիմ, եէնի րուպան վա՞րմը ։

—Պուլունուր էֆէնտիմ ։

—Եէնի րուպալարը՞ը կիյինմէլիսին , պիր թա-զէ թրաշ օլ , սաչլարընըտա գէսսիր տէ պէրպէր ալաֆրանկա տիւզէլթսին , պու ֆէս օլմազ , եէ-նի պիր ֆէս ալմալըսըն , եէնի չիզմէլէր կիյին . էլինէ պէյազ էլտիվէնլէր գօյաճագսըն . . ,

—Զօրպաճը պէն ճայըրմ կէյէմէմ ։

—Նիչի՞ն . . .

—Կէլինի պէն ալաճաք տէյիլիմ . կէօրէն կէօր-մէյէն կիւ վէյի պուսըր աէյէճէքլէր ։

*
* *

Բէնչչէմպիհ սապահը պիր սարաֆ տիւքեանը էօ-նիւնտէ տիւքեանը իլէ միւշթէրի մապէյնինտէ պիր մարագա պաշլանըպ գավկա կիթտիքճէ պէ-յիւմէտէ սէյիրճիլէրտէն պիրի միւտախէլէ էտիպ գավղայը մէն էթմէք իսդրէ տէտի .

—Կարպիս ազա վազ կէչ , ոիզ խըրըմ ագրապա օլաճագսընըզ. իշիթէն կէօրէն նէ՞ տէր ։

—Էյի ամա պիզ ձնա խըրըմ տէտիքճէ, օ պիզէ տօլապ չէվիրիեօր ։

—Նէ եարայըմ գարտաշ , եապանճը ատամտան էօտիւնճ իստէնի՞ր մի ։

—Իշ նէ՞ տիր , հէլէ ձնու աղնաթ իւքին .

—Գարտաշ պու պիզէ հէմ խըրըմ, հէմ մազա-զանըն սարաֆըյտը . պիր այ էվվէլ կէլտի իւչ կիւն իչիւն եիրմի շըմէնտըֆէր էօտիւնճ իսթէտի . շըմէնտըֆէրլէրի պիզտէն ալտը, կէօթիւրմիւշ պաշ կա եէրէ րէհինէ գօյմուշ . պու կիւն եարըն բարա վար կէլէճէք րէհինտէն չըգարըրըմ տէտի . օնտան պէրի իքի այտըր պէնի տըլտատըր . էվվէլի կիւն եէմին պիլլահ էթտի քի բէնչշէմպիհ սապահը վէ-րիրիմ տիյէ .

—Էյ եօգ արթըգ, սէնտէ շըմէնտըֆէրլէրի վէր-մէլիսին .

—Պէ գարտաշ պիր սահաթ էվվէլ, քիմին եանը-նա րէհին պըրաքմըշըսամ ձնուն մազազասընա կիթ-տիմ, պու սապահըն տիւմանտան մազազայը պու-լամատըմ,

—Տօղրու տըր · Հասքէօյ վարօրու տա գէօբ-րիւյէ կիտէճէքքէն Գեազըրահանէ գէօյիւնէ կիթ-տի պու սապահ .

—Էյ շիմտի սազլամ սէօզ , հանկը կիւն վէրէ-ճէքսին շըմէնտըֆէրլէրի .

—Բազար էրթէսի սապահը մութլագ վէրիրիմ, ֆագաթ հալա պէօյլէ տիւմանլը օլուրսա գարըշ-մամ .

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹԸ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐԸՆԹԱՅԼ
Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000. Պահեստի դրամ 6,243,127 Հասոյթ 1887 Տարւոյ 1,932,320

ՆՕՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ
Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000. Պահեստի դրամ 3,421,200 Հասոյթ 1887 Տարւոյ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել, նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուժած վնասնին 15.000 000 Անգլիական Ոսկին կանցնի.

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Անգլ. Ոսկի 5,000,000. **ՅԱՐԻԹԱՅՆ** Պահեստի դրամ Անգլ. Ոսկի 2345991

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն եւ դրամածարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմէսիօն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԴԱՌՆԻԿ Ց. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց.

— 58 —

Պէրարտ. — (Գտաւ ժամանակը այդ բանը մտքէն անցնելուն.)

Պլանշ. — Գոնէ իշխան կամ ազնուական ես, հայրս շատ կը վախնայ անոնցմէ.

Ֆրանսուա. — Ոչ, Աստուած չընէ, իսկ անունս.. (ի՞նչ ըսեմ, ի՞նչ ընեմ) կոչէ.մահի է աղքատ գպրոցական մեմ։

Պէրարտ. — (Ասանկ ալ ստախօ՛ս.)

ՏԵՍԻԼ Ե

Նոյնք, Բրէն, Բարտոյեան (վերարկուով)

Բրէն. — Հո՞ս է.

Պէրարտ. — Դրսէն ոտքի ձայն կառնեմ.

Պլանշ. — Զըլլայ թէ հայրս գայ.

Պէրարտ. — Ել գնա՛ պարոն.

Ֆրանսուա. — Ա՛հ, մէյմը ձեռքս անցնէի այն անզգամը, ի՞նչ կայ որ եկեր հանգստութիւնս կը խանգարէ.

Պլանշ. — Պէրարտ, գետնոզերքին դռնէն շուտ փախցուր զինքը.

Ֆրանսուա. — Ի՛նչ, ասանկ շուտով պիտի ձգեմ երթա՞մ, վաղն ալ պիտի սիրե՞ս զիս.

Պլանշ. — Եւ դո՞ւն.

— 55 —

Պլանշ. — Ա՛հ, ցերեկները մտքէս չելլար, գիշերները երազիս մէջ կը յիշեմ, հիմա ալ կուզեմ որ քովս գտնուի, հոս աչքիս առջևը և բերնովս իրեն ըսեմ թէ՝ երջանիկ եղիր. ո՛հ այո՛, գեղեցիկ կը սիր...

Ֆրանսուա. — Կը սիրեմ դքեզ, ըսէ լմնցուր, կը սիրեմ ըսէ և ալ բանէ մը մի վախնար, վասն զի առանկ սիրուն բերնի մը մէջ կը վայելէ այդ խօսքը.

Պլանշ. — Պէրա՛րտ, Աստուած իմ, մարդ չկա՞յ, ձայն մը, մէկը չկա՞յ։

Ֆրանսուա. — Ի՞նչպէս չի կայ, երկու սիրահար ենք հոս, մեր իրար գտնելը աշխարհ գտնելու չափ է։

Պլանշ. — Պարոն, ուսկի՞ց կու գաս։

Ֆրանսուա. — Ինչո՞ւ կը հարցնես, երկինքէն գամ դժոխքէն գամ, սատանայ ըլլամ Գաբրիէլ ըլլամ, միշտ կը սիրեմ զքեզ։

Պլանշ. — Ո՛հ, Աստուած իմ ողորմէ ինձ և գթա, կը յուսամ որ մարդ չտեսաւ հոս գալդ, դուրս ելիր շուտ, ետքէն հայրս..

Ֆրանսուա. — Դո՛ւրս մի ելլեմ, երբ թեւերուս մէջ քու բաբախող սիրտդ կը սեղմեմ, դուրս մի ելլել, երբ ես քուկդ եմ և դու

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ.

ԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԷՏՈ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Դիմն 100 բարա

Պոզաճեան Բիւզանդ էֆէնտիի աշխատասիրած սոյն նոր Ազգային պատմութիւնն, ոչ միայն իւր պարզունակութեամբ և լեզուին մաքրութեամբ, այլ նաև նմանը ցարդ չտեսնուած գնոյ ժամանութեամբ խիստ յարմար դասագիրք մ՚է մեր ազգային վարժարանաց համար։

Կեդրոնատեղին է հեղինակին գրասունն, Զաքմաքճըլար թիւ 56

ՏԷՐ – ԽՄԲԱԳԻՐ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՇԱՐԱՅ ԸՆԿ.

معارف نظارت جلیله‌سی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر

ՖԼՕՐԻՕ ԵՒ ՌՕԶԱԹԹԻՆՕ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ

Աւրէ ՈՒՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԴԷԶ ՄԻՆՉԷՐԷՆԷ Լ ՍԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ամեն երկուշաբթի Կ. Պոլսէն կը մեկնի ի Մարսիլիա, հանդիպելով Տարանտոյ, Զմիւռնիոյ, Քիոս, Պիրէօն, Քամանտա Մէսինա, Բալէրմոյ, Նաբոլի, Լիվոռնա և Ճէնովա։ (Սոյն ճանապարհը երկու շաբաթը անգամ մը միայն Զմիւռնիա և Քիոս չի հանդիպելով Սելանիկի համար կը մեկնի։)

Ամեն երկուշաբթի Սուլինա, Կալաց և Խարայիլ։

Ամեն Չորեքշաբթի Պրէօն, Պրինտիզի, Պար, Անքոնա, Վենէցիա և Թրիէսթէ։ Ամեն Հինգշաբթի ուղղակի յՕտէսա։

Երկուշաբաթը անգամ մը եչ. օրեր Սամսոն, Տրապզոնա Պաթում։ Դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։ Զսխաւոր գին Օրինաւոր գներով վաճառք կընդունուի Եւրոպ երկիրներու համար

Դիմել առ Պոլսոյ մանուաճիւրնՊահէք գաբու թիւ 59

ալ իմս ես, հիմա բերնովդ ըսիր կը սիրեմ զքեզը։

Պանչ.— Ա՛հ, հիմակուան ըսածներս մտիկ ըրեր ես։

Ֆրանսուա.— Անտարակոյս, կա՞յ ուրիշ հրեշտակային ներդաշնակութիւն մը որ աւելի քաղցր հնչէ տականջիս։

Պանչ.— Այսքան խօսելայր բաւական է, Աստուծոյ սիրոյն համար, ալ դուրս ելլ։

Ֆրանսուա.— Դո՛ւրս մի ելլել, երբ քու վիճակդ իմ վիճակիս հետ կապուած է, երբ մեր երկուքին աստղը միևնոյն հորիզոնին վրայ կը փայլի, երբ քու անարատ սիրտդ արթնցնելու, երբ աչուընդդ 'ի լոյս բանալու համար Աստուած զիս է ընտրեր, և հոս առաջնորդեր է, ի՞նչպէս կրնամ քեզ ձգելու երթալ, սէրը հոգւոյն արևն է անոր մեղմ բոցին տաքութիւնը չես զգար, այն արքունական գաւազանը որ մահ կուտայ և կառնէ պատերազմներու մէջ, վասակած փառքը մեծի անուն ստանալը, կայսրածները, հոգեր ունենալը կայսր կամ թագաւոր ըլալը բոլորն ալ մարդկային ոչինչ բաներ են, այս աշխարհիս վրայ ամեն բան եւսեւ է եւսեւ կանցնի

անհետ կելլայ, մինակ մէկ բան մը երկնային տիւական սէրը, ա՛յ Պանչ, այս սէրը սիրահարիդ քեզի բերած երջանկութիւնն է, այն երջանկութիւնը, որ երկնքի դրանդ առջեւը կ՚սպասէր, կեանքը ծոցիկ մ՚է և սէրը անոր անուշ հիւթը, սէրը այն երկնքի չնորհն է որ զօրութեան վրայ կը կրթնի։ Ձեռքդ ձեռքիս մէջ ասանկ անուշ կերպով մոցած մնար ալ նոյն սէրէն է, սիրենք ուրեմն զիրար, սիրենք այսուհետև։

Պանչ.— Հանդարտ ձգէ զիս կարդամ։

Պէրարտ.— (Դարձը ապէկ կարդին է.)

Ֆրանսուա.— (Ալ բռնուեցաւ) մէյ մը լսեմ, կը սիրեմ զքեզ ըսէ։

Պէրարտ.— (Վա՛յ անիրաւ մարդ).

Ֆրանսուա.— Ով իմ Պանչս, ըսէ։

Պանչ.— Լսեցիր արդէն և գիտես։

Ֆրանսուա.— Այո՛, ալ հիմայ երջանիկ եմ։

Պանչ.— Ես ալ թշուառ եմ։

Ֆրանսուա.—Ամենեին, ինչո՞ւ ըլլաս թշուառ, ինծի հետ դաս ալ երջանիկ ես։

Պանչ.— Անծանօթ ես ինծի, անուանդ ըսէ որ իմանամ։